



# ԱՐԱԲԱՏԱՏ

ամսագիր

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՐԱԿԱՆ, ԲԱՆԱՒՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Ժ. ՓԵՏՐՈՒԹՅՈՒՆ 1870

Բ. ՏԱՐԻ

Կ Ր Օ Ւ Ա Կ Ա Ն

Եպիփան Եպիսկոպոս

ԵՒ ՆՈՐԻՆ ՃԱԼ

(Հ-Դ-Ռ-Հ-Հ-Խ-Հ-Հ-Հ)

Եւ տեսեալ զայն ամենայն Ըռաբեկցին,  
փառառոր առներ զամենասուրը զերբոր-  
դութիւն<sup>1)</sup> Սատուած, որ երաց գուռն հա-

ւառոյ քաղաքին, և ամենայն միջազետաց  
Ծորուոյ և Հայկազեանց, մեծաց և հզօրաց:  
Եւ իրեւ կամեցաւ զնալ ՚ի քաղաքին, առեալ  
զնկարագիր պատուերին Տէրունական, յա-  
շացն և յերեսացն արկանելով, որպէս և իսկ

1) յշրջն պակասէր ամենասուրը զերբորդութիւն:

ՎՐՅԻՍՏՈՒՄ ԹԵՍԱՆԻԼՈՎՅ, և աղօթեալ մաղթէր ևս 'ի նմանէ, «Տէր իմեւ Եստուած Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ, 'ի զթութիւն Ճօր և Ճոգւյն Արբոյ, աղաչեմ զքեղորպէս և ես լուսատու տիեզերաց, լուսաւորեամ զենակից քաղաքիս լուսով Աստուծութեան քո, կալ մնալ հաստատուն 'ի հաւասոս Ճօր և Որդւյն Արբոյ, զոր և արդ ընկալան շնորհօք կենդանարար և աշխարհակեցոց մահուամբ քո, և քեզ փառք յամենայն արարածոց հանգիրձ Ճարդ և սուրբ Ճւգլովդ այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից ամէն:

Եւ ամենեցուն ասացեալ զանան, և իսկոյն ողջունեալ Երբային և 'ի նախարարացն և յամենայն նորահաւատ 'ի Քրիստոս բազմամբոն և անհամար ժողովովքն (զոցն), ևս և յիւրոց աշակերտացն: Օն խոկ և աղերսանօք ասաց Երբային քաղցրութեամբ՝ օժընդակ լինելնոցա 'ի քարոզութիւն Եւետարանին Քրիստոսի: Եւ յարտասուս եղեալ Երբային և ամենայն բազմութիւնն յուղարկելով զԵռաքեալն Աստուծոյ: Եւ նորա ելեալ գնաց 'ի մեծ և 'ի լոյնատարած աշխարհն Ճայոց մեծաց, քարոզելով գՔրիստոս Եստուած՝ Տէր կենդանեաց և մեռելոց: Եւ թագաւորն և աշակերտքն, և մեծամեծ աւագանին հանգիրձ ամենայն բազմութեամբ նորածնելոց աւազանաւն, դարձան 'ի քաղաքն իւրեանց, փառաւորելով գոհայողական ձայնիւ զամենասուրբ զԵրբուրդութիւնն և զի Եստ-

ուածութիւն, որ և կոչեաց զնոսա 'ի հաւատու իւր սուրբ:

Եւ մնաց դաստառակին սուրբ պատկերան Տէրունական նկարագրեալ՝ անդէն 'ի քաղաքն Ուռհայ, մեծաւ պատուվ և փառաւորութեամբ, որպէս զնոյն ինքն Քրիստոս: Ուստի և իմաստնացեալ առաքելոցն Տեառն խնդրեցին յԵստուածամօրէն 'ի ժամանակի փոխման՝ զկենդանազիր պատկերին իւր սուրբ: Եւ զառուվն յորում կոյր տղայական հանգիրձն Յիսուսի, և իւրն իսկ վերարկուն՝ պատուական և Եստուածընտեալ գլխոյն. որ և հաճեալ սրբոց հարցն և յուլեսի յերկուսն ըստ հաւատոցն որ 'ի Յիսուս Քրիստոս ունէին, տօնել հրամայեցին ամ յամէ հանգիրձիցն Տէրունական, և անօթին սրբոյ 'ի կատարումն զրելոցն, որպէս այն զի ասէ, և ամենայն փայտ յանօթ Խորացեղի հրամանաւ Եստուծոյ պատուեալ մեծարեացի»:

Օն անդր և զնաց անօթն, և հանգիրձքն տղայական, այլ և պատանքն և վարշամակն, և պատկին փշեայ, և որ այլ ինչ տնօրինականացն պատշաճիւր. Ճրամաննաւ Տեառն մերոյ 'ի ձեռն սուրբ Կուսին, տալով յորդին իւր յաւետարանին Յօհաննէս, և նա տարաւ յԵփեսոս: Եւ անտի փոխեալ 'ի Կոստանդինուլիս, հրամանաւ արքային Կոստայ (Կոստանդինոյ կամ Կոստանդինոսի), զոր և յիւրում տեղոջն բովանդակեալ ասացաք. և պատկեր Տիրամօրն յառաջեաց 'ի ձեռն Շարժողիմէոսի առաքելոյ, լուսաւորեալ զՃայաստան, զԵփեսի և զարեկլու: Եւ դաստառակին որ ունէր զպատկիրն Քրիստոսական նկարեալ, մնաց անդէն 'ի քաղաքն Եղեախայ, որում և պարզեցաւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Փրկչէն մերմէ առնելով անդ նշանս 'ի վերաց

2) յԵրդին եւ յԵրդին պակասէին ոբոէն և է-է շբէ-  
ռա բեռնելով.

3) յԵրդին աստի ի փայր պակասէր մինչև զ-է-է  
բեռնայ ո-է-է:

4) յԵրդին և առաջեալ առնեցաւ շբէ-է:

5) յԵրդին չի ը ո-է-է:

ամենայն հիւանդաց ևս առաւել զողեաց, բորսաց, պիսակաց: «Ես և հալածումն զիւց պղծոց յանձանց հաւասացելոց Վրիստոսի: Որում և իմն համանուն որ է ուսալ՝ ի Ներսացեցոյն, սպասէ խնդրել նշանսի Տէրունական պատկերէն. այլ և յիւր իմասն հեթանոսական ապաստանեալ ընդդիմաբան ինձ ձզնի, որպէս գուն գործելով և աշխատէ զիս բանիւ, բայց և ՚ի Նոգեցն սրբց իմ զիւտելով, զոր նորայն շնորհ պարփէի:

Եւ արդ որպէս ընդ հայելի ակամք աեսանեմ՝ փութով՝ ի ձեւն մեծաքանչնշանի, արժանաւոր խոստովանութեամբ ՚ի Վրիստոս Յիսուս դաւանել զամենասուրբ Վերրորդութիւն և զմի Աստուածութիւն, մկրահելով ևս ՚ի մահն Վրիստոսի, և մեծապայծառ փառօք և պատուով՝ Վրիստոսազգիաց լինելով: Օն իսկ և արժանաւոր աշտիճանաւ կրօնաւորական քահանացութեամբ խառնի և ՚ի դասս հայրապետաց սրբոց, յիշատակ ինձ լինելով Պատուարագն Նոր բաշխելով զմարմին և զարիւն Տեառն, որպէս և ՚ի հրապարակս նորուն. արդ միանդամ ունի թողուլզուն, զիին, և զորդիս և զագարակս, բառնալ և զլուածն Վրիստոսի գնալով<sup>8</sup> զշեա նորա:

Օն իսկ և բազմաց լինի լուսաւորիչ Վրիստոսական իմաստութեան լինելով և իւրն իսկ ժառանգ Աստուծոյ, առնէ և զշաւացենալս սուրբ Երրորդութեան պատրագաւն Վրիստոսի՝ ժառանգ Աստուծոյ և ժառանգակից Վրիստոսի՝ ի փառս իւր Նոյ-

- 6) ի դաղափ. եւ յշրդ օրին. չիք է Տէրունական պատկէն:
- 7) յշրդն աստի պակասէին մի բանի տողը մինչ ցայն վայր է հրապարական նորուն:
- 8) յշրդն եւ յշրդն ուներ աստ է:

րենի, որով և մէք ամենիքեան արժանաւորք եղցուք<sup>9</sup> շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Վրիստոսի: Ինդ որում Նոր և սուրբ Նոգեցն վայելէ փառքիշանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամեն,

ԲԱՆ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱԸՆ ԼԻԲԱՆԱՆՑԻ ԿԱՐ-  
ՄԵՑԵԱԸՆ ՀԱՅՑ ՔԵՐՈՎՔԻՒ ԱՌ ԱԶԳԻՆ ՀԱ-  
ՅԵՑ ԵՒ ՎԵՐԱՑԵՍՈՒՇԿՆ ԲԵՐԻԱ ՔԵՐԱ-  
ՔԻ ՍԻՄԷՕՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ. \*

Յանեարժան պէտառնէ ու բարձրէն առ սէրէն  
Եղբար աղջին Նոյնց:

Ընդ վայր պարպատին՝ ուռկանք որսորդաց,  
Յորսալ խորասոյդ վայրագ լողակաց,  
Նանիր զիշերի Պետրոս վաստակեաց,  
Մինչև Տէրունացն ազդեալ հրամանաց,  
Աղօտ շամանդաղ փաղփին պարծանաց,  
Առեալ ՚ի յանօթ ՚ի մեր ծնողաց,

Նա իսկ գողորդական շուք գոյ նախորդաց,  
Քան թէ պերճանալ ծուենիւք ծիրանեաց,  
Անդուկ անդադար ՚ի ձայն հեծութեանց,  
Ողբամ զանջատեալ ազդիս Արամեանց,  
Եղնկ և աւաղ՝ խորթ պյու զաւակաց,  
Ի գուք սահելոց կարծեաց սոսւերաց,  
Անկան սոսուցեալք յիւրեանց մօր զրկաց,  
Անսաստ կանոնի սուրբ Հայրապետաց,

Ի ժանտ նեստորի ըմպեն լճակաց,  
Հոգեցն ոչ բղիկլ ՚ի յերկուց Անձանց,  
Հայր ՚ի մինքնեն, Որդի ՚ի Հօրէ,  
Հոգին ՚ի նոցունց՝ սուրբ Գրիգոր ասաց:

9) յշրդն այսպէս վերջարաներ, Պատուածութեան Նոյն և զնուրք և զուրք չոքին Առաջանց և հիւր և յանեան ամեն:

\* Խնչպէս զրած եմք զեկտ, ամսագրոյ մէջ երես, 195, այս հին գրուածքն է մին, զոր այլ երկու գրուածներով լճագունած եմք չուսոմքալջ բարեկ, Մինաս Գահանային: Մնացեալ երկու քը յաշորդ ամսագրոյ մէջ կը երապարակենք: